ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2011թ. օգոստոսի 2 **թիվ 79 - Ա**

ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության պետի 2011թվականի հունիսի 27-ի թիվ 24-01/01-81 գրությունը՝ ***կարգադրում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Վարդենուտի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Արա Պետրոսյանին հայտարարել նկատողություն:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ